Արդյո՞ք Իսրայելի շահերից է Թուրքիային ՆԱՏՕ-ից հեռացնելը

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 05.08.2024 թ.[1]

29.07.2024 թ. Իսրայելի արտգործնախարար Իսրայել Կացը կոչ արեց «*Թուրքիային անհապաղ հեռացնել ՆԱՏՕ-ից*»: Նա ընդգծել է, որ նախագահ Էրդողանը իր երկիրը դարձրել է «*իրանական չարի առանցքի մասնակից*»: Կացը նաև հիշեցրել է, որ Թուրքիան իր տարածքում բարեհաճորեն ընդունում է ՀԱՄԱՍ-ի անդամներին, որոնց դեմ ներկայումս պայքարում է Իսրայելը:

Իսրայելի նախարարն հայտարարություններն արել է՝ ի պատասխան թուրքական բանակը հրեական պետության մեջ մտցնելու Էրդողանի սպառնալիքներին: Մեկ օր առաջ Ի. Կացը *X*-ի իր էջում թուրք առաջնորդին համեմատել է Սադդամ Հուսեյնի հետ. «*Էրդողանը գնում է Սադդամ Հուսեյնի ճանապարհով՝ սպառնալով հարձակվել Իսրայելի վրա: Պարզապես հիշեցնենք նրան, թե ինչ տեղի ունեցավ այնտեղ [Իրաք] և ինչպես ամեն ինչ ավարտվեց*»:

Դատելով Իսրայելից ստացվող տվյալներից՝ Կացի հայտարարությունը Հյուսիսատլանտյան դաշինքից Թուրքիային հեռացնելու մասին զուտ հռետորական ուղերձ չպետք է համարել: Ըստ *The Times of Israel* հրատարակության՝ հրեական պետության ԱԳՆ-ն տարածել է հետևյալ հայտարարությունը. «*Թուրքիայի նախագահի՝ Իսրայել ներխուժելու սպառնալիքների և նրա վտանգավոր հռետորաբանության լույսի ներքո՝ Իսրայել Կացը դիվանագետներին <…> հանձնարարել է շտապ համագործակցել ՆԱՏՕ-ի բոլոր անդամների հետ, կոչ անելով դատապարտել Թուրքիային և պահանջել հեռացնել դաշինքից*»:

Իսրայել Կացի հնչեղ խոսքերից երկու օր անց Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Հաքան Ֆիդանի արձագանքը հետևյալն էր. *«Սրանից բան դուրս չի գա : Թուրքիայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին չի կարող կասկածի տակ դրվել նման հավասարման մեջ: Բացի այդ, Թուրքիան միակ երկիրը չէ, որի կարծիքը պաղեստինյան հարցի վերաբերյալ չի համընկնում Արևմուտքի հետ: Կան այլ երկրներ, որոնք ունեն Իսրայելին դեմ դիրքորոշում, սակայն նրանց ձայների տոնայնությունը կարող է տարբեր լինել: Պաղեստին պետության ճանաչման համատեքստում Իսպանիան, Իռլանդիան և Նորվեգիան պաշտոնապես հայտնել են իրենց դիրքորոշումը»:*

Նախ, հարկ է նշել, որ Հ. Ֆիդանը որոշ չափով ուշացել է իր գործընկերոջը պատասխանելիս, ինչից կարելի է եզրակացնել, որ թուրքական դիվանագիտությունը հայտնվել է բավականին ծանր վիճակում: Ռ. Էրդողանի՝ Իսրայել ներխուժելու պատրաստակամության սպառնալիքն աննախադեպ է նույնիսկ վարչապետ

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 04.08.2024 թ.:

Նեթանյահուի հասցեին սովորական դարձած անձնական վիրավորանքների ֆոնին: Նման հռետորաբանությունը հատկապես սադրիչ է Մերձավոր Արևելքում տիրող պայթյունավտանգ իրավիճակի և Իսրայելին նետած գոյութենական մարտահրավերների լույսի ներքո:

Սակայն, մյուս կողմից ակնհայտ է, որ Ֆիդանը չէր կարող իր պատասխանը ձևակերպել այնպես, որ դա թվար որպես «ապաշխարություն» թուրք առաջնորդի խոսքերի համար, ինչը նրան, անշուշտ, դուր չէր գա: Հետևաբար, Թուրքիայի արտգործնախարարն իր պատասխանում նախընտրեց բանավեճը շեղել հարցի էությունից: Անկասկած նա իրավացի է՝ ասելով, որ Հյուսիսատլանտյան դաշինքի շատ անդամներ աջակցում են «*պաղեստինյան անկախությանը*» և այս կամ այն չափով դատապարտում են Թել Ավիվին՝ Գազայում կոնկրետ գործողությունների համար: Սակայն, դա ամենևին չի նշանակում, որ նրանք կարող են լինել Իսրայել՝ Մեծ Մերձավոր Արևելքում ՆԱՏՕ-ի գլխավոր դաշնակից երկիր, թուրքական ներխուժման գաղափարի կողմնակիցներ: Թուրքիայի ԱԳՆ ղեկավարն իր պատասխանում փոխարինել է քաղաքական ու դիվանագիտական քաշքշուկի ֆոնը՝ իր դատողությունների փակագծերից դուրս թողնելով սկանդալի բուն ծագումը: Ինչ վերաբերում է Թուրքիային ՆԱՏՕ-ից հեռացնելու գործընթաց սկսելու Իսրայելի իրական սպառնալիքներին, ապա այստեղ ևս նկատվում են էքսցենտրիկության և արմատական գործողությունների բեմականացման նշաններ: Անկասկած, Թել Ավիվը իր դաշնակից ՆԱՏՕ-ի անդամ երկրների հետ հարաբերությունների օրակարգում կներառի Թուրքիայի «*անվայել պահվածքը*» քննարկելու և դատապարտելու հարցերը: Բայց, միևնույն ժամանակ, թուրքական քայլերին հակազդելու ընտրված մեթոդը չի նախատեսում իրական քայլեր Անկարային Հյուսիսատլանտյան դաշինքից «դուրս մղելու» համար:

Նախ, Իսրայելը ՆԱՏՕ-ի անդամ չէ, հետևաբար, չունի իրավական գործիքներ նման հարցը ռազմաքաղաքական կառույցի՝ գոնե քննարկմանը բերելու համար:

Երկրորդ, ՆԱՏՕ-ի կանոնադրության հիմնարար դրույթներից մեկը՝ «կոնսենսուսային որոշումների» սկզբունքը, ներկայումս բացառում է Թուրքիայի կարգավիճակի վերանայման հնարավորությունը, քանի որ 32 անդամների զգալի և, նույնիսկ՝ մեծ մասը, չի ընդունում նման նախաձեռնությունը:

Երրորդ, Թուրքիան համարվում է Հյուսիսատլանտյան դաշինքի հնաբնակներից մեկը և մի շարք պարտադրող գործոնների պատճառով կարևոր դեր է խաղում դրանում: Տեսականորեն, նույնիսկ այնպիսի «աննշան» երկրների, ինչպիսիք են՝ Էստոնիան կամ Ալբանիան, հեռացումը ՆԱՏՕ-ից առնչվում է բազմաթիվ իրավական և տեխնիկական խնդիրների հետ և հղի է անդառնալի հետևանքներով ողջ ռազմաքաղաքական բլոկի ապագայի համար: Զինված ուժերի քանակով ԱՄՆ-ից հետո ՆԱՏՕ-ի երկրորդ

ամենամեծ երկրի՝ Թուրքիայի հեռանալը դաշինքից այլևս կասկածի տակ կդնի նրա հետագա գոյությունը:

Չորրորդ՝ չպետք է միանշանակ ասել, որ ՆԱՏՕ-ից Թուրքիայի հեռացումը բխում է Իսրայելի սեփական ազգային շահերից: Քանի դեռ Թուրքիան Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ է, այն քիչ թե շատ վերահսկվում է, անկախ իր առաջնորդի անձնական նկրտումներից ու բնութագրերից: Դաշինքից դուրս՝ չծանրաբեռնվելով իր պարտավորություններով, այն, թեկուզ կարճաժամկետ հեռանկարում (տնտեսական իրավիճակի պատճառով), կարող է դառնալ Արևմտյան Ասիայում նշանակալի ռազմաքաղաքական միավոր, Իսրայելին՝ նոր թշնամի ստանալու փաստի առաջ կանգնեցնելով: Այս պահին սա հրեական պետության համար զարգացումների ամենաանընդունելի սցենարն է:

Եվ, վերջապես, հինգերորդ՝ Թուրքիան Ադրբեջանի հետ միասին Իսրայելին կայուն կերպով տրամադրում է հումք և ռազմավարական նպատակի ապրանքներ, որոնք այս պահին գոյութենական նշանակություն ունեն Թել Ավիվի համար, շատ ավելի նշանակալից, քան Էրդողանի ագրեսիվ հռետորաբանությունը, որն իրականում գործնական սպառնալիքներ չի պարունակում:

Ուստի Թել Ավիվից չպետք է ակնկալել արդյունավետ քայլեր, որոնք ուղղված են Թուրքիային ՆԱՏՕ-ից հեռացնելու միջոցով Արևմուտքի մերձավորարևելյան քաղաքականության փաստացի ապամոնտաժմանը: Միգուցե հռետորաբանությունը կշարունակի հետևողականորեն թեժանալ, և Իսրայելը չի հրաժարվի այս ուղղությամբ ցուցադրական ժեստերից, բայց այս ամենը չի հասցնի «անդառնալի կետին» և Անկարայի ու Թել Ավիվի տասնամյակներ շարունակ կառուցած հարաբերությունների վերջնական վատթարացմանը: